տացուած է եղել, որ վրաց զօրամասը պէտք է մնայ Արտահանում. «Բացի այդ, վարչապետը տեղեկութիւններ ունի, որ Արտահանում երեւացել է հայկական բանակի մի սպայ. դրանից վարչապետը եզրակացութիւն է հանում, որ անգլիական կառավարութիւնը, յանձին Քորրի, Արտահանի դաւառի միւս ափին գտնուող մասը յանձնում է հայերին»:

«Բրիտանական զինուորական ուժերի հասնելուց յետոյ ոչ վրացիներին կարիք կը լինի, ոչ հայերին»,— պատասխանում է զօր. Քորին:

Մի ուրիշ խօսակցութեան ժամանակ էլ Ժորտանիան բողոքում է զօր. Քորիին, որ վերջինս ստիպում է վրաց զօրքերը հեռացնել Արտահանի դաւառից. նա պնդում է, որ Արտահան քաղաքը եւ դաւառի այս կողմի մասը պատկանում է Վրաստանին:

Կամաւորական բանակի դէմ խօսելիս Ժորտանիան մի քանի անգամ շեշտում է, որ հայերը գործում են նրանց հետ.

«Հայերը Կամաւորականների առաջապահ զօրամասերում են գտնւում»:

Զօր. Բիչը բացատրում է, թէ հայերը, ինչպէս եւ արխազցիներն ու ծովեզերքի ռուսները յանախ բողոքել են վրացիների դէմ. «Դենիկինի զօրքերը տեսնում էին, թէ վրացիները ի՞նչպէս հայերին գնդացիրներից գնդակահարում էին 100 դեսի մօտ»:

Ժորտանիան չի կարողանում հերքել այս փաստը: Եւ, իսկապէս, դժուար է հերքել, որովհետեւ, իրօք որ, վրացիները իրենց կարճատեւ իշխանութեան ընթացքին շատ բռնութիւններ գործադրեցին արխազ, բայց մանաւանդ հայ ազգաբնակութեան դէմին: Եւ այդ բռնութեան էլ զոհ գնացին:

* * *

Մոայլ, ճնշող տպաւորութիւն թողնող գրութիւններ են քննութեան նիւթ կազմող վաւերագրերը:

Խնդիրը այն չէ, որ անգլիացիք իրենց պահում են, կարծես, նուաճուած երկրում — պատերազմական մթնոլորտը դեռ չէր պարզուել եւ պատերազմական ոգով տոգորուած զօրավարներից ուրիշ վերաբերում սպասել էլ չէր կարելի:

Այդ երեւոյթը ընդհանուր էր եւ միայն Վրաստանին յատուկ չէր: Այդ երեւոյթը ժամանակաւոր էր. խաղաղութիւնը կը հաստատուէր, զօրամասերն ու զօրավարները կը քաշուէին իրենց տները, եւ հարցը կը փակուէր: Ճնշիչը վրացի զեկավարների երեւան հանած մտայնութիւնն է՝ թէ իրենց սեփական գործերի եւ թէ հարեւանների նկատմամբ: Այդ մտայնութիւնն էր գլխաւոր պատճառներից մէկը, որ Անդրկովկասեան հանրապետութիւնները ձգեց բոլշեւիկների ձեռքը, իսկ նրանց վարիչներին հասցրեց — Փարիզ:

Փոխուա՞ծ է արդեօք այդ մտայնութիւնը այսօր: Ո՛չ, դժբախտաբար: Եթէ կարելի լինէր բանալ Ժորտանիաների արխիւները եւ հրապարակ հանել նրանց գործունէութեան նորագոյն շրջանին վերաբերուող վաւերագրերը — ո՞վ գիտէ ինչ անակնկալ բաներ դուրս կը գային: Եւ այս անգամ, դուցէ, զօր. Ուօկկերների ու Քորիների, Սըր Ուօրտրոպների փոխարէն ո՞վ գիտէ ի՞նչ տարօրինակ անուններ ցցուէին մեր առջեւ, աշխարհական ի՞նչ հեռաւոր ու հակոտնեայ վայրեր կապուէին իրար հետ վրացական պատեհապաշտ ու ոլորուն քաղաքականութեան շնորհիւ:

Աւելի քան որեւէ մէկը, վրացի մենշեւիկները հաստատում են, որ այսօրը շարունակութիւնն է երէկուան: Մարդիկ հետեւողական են եւ սկզբունքային՝ իրենց պատեհապաշտութեան եւ անսկզբունքութեան մէջ: